ՎԴ/9950/05/25

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

14 օգոստոսի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գոռ Հակոբյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահին փոխարինող Քրիստինե Մկոյանս, նիստում ուսումնասիրելով թիվ ՎԴ/9950/05/25 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 29-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Լուսինե Գրիգորյանը 2025 թվականի հունիսի 25-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 25-ի հանձնաժողովի որոշումը՝ «Անգլերեն 9» առարկայի դասագիրքը «Մարի հրատարակչություն» ՍՊԸ-ի և

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից անցողիկ շեմը հաղթահարած ճանաչելու և գործածության երաշխավորման ներկայացնելու մասին, անվավեր ճանաչելու, անցողիկ շեմը «Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Անգլերեն 9» առարկայի դասագիրքը հաղթահարած ճանաչելու՝ ներկայացնելով գործածության երաշխավորման, որպես հետևանք՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 25-ի հանձնաժողովի «Զանգակ-97» ՍՊ ընկերության հետ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ պայմանագիր չկնքելու և գումար չհատկացնելու մասին որոշումը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ «Մարի հրատարաչկություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ 9-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհների տրամադրման համար նվիրաբերության պայմանագրեր կնքելու մասին որոշումը (հրամանը, հաստատումը), «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ «Մարի հրատարակչություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ 9-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհների տրամադրման համար կնքված նվիրաբերության պայմանագրերն անվավեր ճանաչելու, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատմանը ներկայացնելու «Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Անգլերեն 9» առարկայի դասագրքի ստեղծման դրամաշնորհի տրամադրման նվիրաբերության պայմանագիրը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի մայիսի 22-ին ԿԳՄՍ նախարարություն Լուսինե Գեորգիի Գրիգորյանի կողմից ներկայացված բողոքի քննության արդյունքում կայացված «Զանգակ-97» ՍՊԸ-ի «Անգլերեն 9» դասարանների առարկաների դասագրքերի համար կրկնակի փորձաքննություն չիրականացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը «Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի ստեղծման դրամաշնորհի

տրամադրման նվիրաբերության պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու և «Զանգակ-97» ՍՊԸ-ին գումար հատկացնելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հուլիսի 31-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասին, 1043-րդ հոդվածին, ՀՀ Կառավարության՝ 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 9-րդ, 10-րդ կետերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0823/05/14 գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ ՀՀ վարչական դատարանը 2025 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) [Ս]ուբսիդիա կամ դրամաշնորհ տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի համաձայն կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա, իսկ կազմակերպությունը, որին հատկացվում է դրամաշնորհ, որոշվում է սույն կարգի համաձայն կազմակերպվող և անցկացվող մրցույթի արդյունքներով, ընդ որում, որպես կանոն, հրապարակային մրցույթ կազմակերպելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ:*

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանն արձանագրում է, որ Հայցվորի և «Զանգակ-97» ՍՊ ընկերության միջև 2025 թվականի հունվարի 9-ին կնքվել է ստեղծագործության նկատմամբ գույքային իրավունքների փոխանցման թիվ 9/Ա/1-25 պայմանագիր, համաձայն որի՝ հեղինակ Լուսինե Գեորգիի Գրիգորյանը ձեռքբերող «Զանգակ-97» ՍՊ ընկերությանն է փոխանցել «Անգլերեն» առարկայի 9-րդ դասարանի դասագրքի, մեթոդական ուղեցույցի, դասագրքի բովանդակությունը լրացնող կամ հարստացնող այլ ուսումնական նյութերի իր հեղինակած մասերի նկատմամբ իր հեղինակի բացառիկ գույքային իրավունքները: «Զանգակ-97» ՍՊ ընկերությունը մասնակցել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված մրցույթին «Անգլերեն» առարկայի 9-րդ և 11-12-րդ դասագրքերի «ՀՀԿԳՄՄՆԴՄ-1146/00025» ծածկագրով մրցույթին, սակայն փորձագիտական հանձնաժողովի կողմից «Զանգակ-97» ՍՊ ընկերության ներկայացրած դասագրքի վերաբերյալ տրվել է բացասական եզրակացություն, իսկ մրցույթում հաղթող են ճանաչվել «Մարի հրատարակչություն» ՍՊ ընկերության և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի ներկայացրած «Անգլերեն-9» առարկայի դասագրքերը:

(...) Դատարանը գտնում է, որ սույն դեպքում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանդես է գալիս ոչ թե որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված անձ, ով իրացնում է հանրային իրավունքի նորմերով իրեն վերապահված լիազորություններն իր գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, այլ որպես քաղաքացիական իրավահարաբերության մասնակից՝ ապագայում կնքվելիք քաղաքացիաիրավական պայմանագրի կողմ՝ Հայաստանի Հանրապետության անունից:

Հետևաբար քննարկվող իրավահարաբերության բովանդակությունն է կազմում ոչ թե պետության՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այլ քաղաքացիական իրավահարաբերություններում որպես քաղաքացիաիրավական

պայմանագրի կողմ հանդես գալու իր իրավունքը, և այս իրավահարաբերությունն ուղղված է պետության՝ որպես քաղաքացիական իրավահարաբերությունների սուբյեկտի մասնավոր շահի իրացմանը:

Այլ կերպ ասած՝ սույն դեպքում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից վարչարարություն չի իրականացվել, այլ՝ սույն վեճից ծագող հարաբերությունները կրում են մասնավոր՝ պայմանագրային բնույթ, և, ինչպես նշվեց նախորդիվ, դրամաշնորհի հատկացման նպատակով պայմանագրի կողմի ընտրությունն իրականացվում է մրցույթի միջոցով, իսկ հրապարակային մրցույթ կազմակերպելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ:

Ամբողջ վերը նշվածի հիման վրա Դատարանը եզրահանգում է, որ հայցվոր Լուսինե Գեորգիի Գրիգորյանի ներկայացրած պահանջը վարչական դատարանում քննության ենթակա չէ, ուստի այն պետք է վերահասցեագրվի ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (…)»[1]:

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, 10-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, ՀՀ Կառավարության՝ 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 9-րդ, 10-րդ կետերին, ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի փետրվարի 3-ի թիվ ՍԴՈ-787 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշմանը, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԱՔԴ/0433/02/11, թիվ ԵՄԴ/1029/02/14, թիվ ԵԴ/38635/02/19 գործերով արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին և այդ առնչությամբ

[1] Տե՛ս դատական գործը, հատոր 1-ին, թերթեր 50-57:

դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(...) [Թ]ևեր Կարգի 2-րդ կետում նշվում է, որ դրամաշնորհը տրամադրվում է քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա, սակայն քաղաքացիաիրավական բնույթ ունի միայն այդ պայմանագրի կնքումից հետո ձևավորվող իրավահարաբերությունը, իսկ դրան նախորդող փուլում ծագող հարաբերությունները, ներառյալ՝ մրցույթի կազմակերպումն ու դրա արդյունքների հաստատումը, կարգավորվում են հանրային իրավունքի նորմերով: Մասնավորապես, Կարգի 9-րդ և 10-րդ կետերով կարգավորվում է նախապատրաստական փուլը՝ մրցույթի անցկացումը, մասնակիցների ընտրությունն ու որոշման կայացումը, որոնք իրենց էությամբ հանդիսանում են պայմանագրի կնքմանը նախորդող վարչական գործընթացի տարրեր: Այս փուլում որոշումն ընդունվում է մրցույթի հանձնաժողովի կողմից, պետության անունից կայացվում է հանրային-իրավական բնույթի որոշում՝ դրամաշնորհի տրամադրման կամ մերժման վերաբերյալ:*

Ընդ որում, Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ վիճելի իրավահարաբերությունը բացառապես որպես պայմանագրային որակելու դեպքում շահագրգիռ կողմը չի կարող վիճարկել մրցույթի արդյունքը կամ հանձնաժողովի որոշումը մինչև պայմանագիր կնքելը: Մինչդեռ՝ նման մեկնաբանությունը հակասում է հայցվորի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրացման նպատակին. եթե իրավահարաբերությունն ամբողջությամբ դիտարկվում է որպես քաղաքացիաիրավական, ապա դրանից բխում է, որ դատական վերահսկողությունը հնարավոր է միայն պայմանագրի կնքման պահից հետո, ինչն էապես սահմանափակում է այն վարչական որոշումների՝ մրցույթի արդյունքների, հանձնաժողովի գնահատականների և մերժման արարքների վիճարկելիությունը, որոնք իրավական հետևանքներ են առաջացնում դեռևս պայմանագրի բացակայության պայմաններում:

Այդուհանդերձ, երբ իրավահարաբերությունը ճանաչվում է որպես վարչական, ապա գործի վարույթը, մրցույթի անցկացումն ու եզրակացության ընդունումը՝ որպես ապագա պայմանագրային հարաբերության նախադրյալներ, ունենում են հանրային նշանակություն, կարգավորվում են նորմատիվ իրավական ակտերով և ենթարկվում են հանրային իրավունքի կանոններին բնորոշ

վերահսկողության մեխանիզմներին, քանի որ ուղղված են պետական մարմնի՝ հանրային շահի իրացմանն ուղղված գործառույթների իրականացմանը:

Հաջորդիվ, Դատարանը հարկ է համարում վեճի բնույթի գնահատումն իրականացնել նաև հատուկ իրավունքի տեսության կիրառմամբ, որը հնարավորություն է տալիս պարզել՝ արդյո՞ք իրավահարաբերությունը կարգավորվում է հանրային իրավունքի նորմերով: Այդ նպատակով անհրաժեշտ է դիտարկել հետևյալ հարցերը.

– ո՞ր իրավական նորմերն են կիրառվում տվյալ վեճի լուծման համար,

– հանդիսանու՞մ են արդյոք այդ նորմերը հանրային իրավունքի նորմեր՝ հաշվի առնելով դրանց ուղղվածությունը հանրային շահի պաշտպանությանն ու կարգավորման ենթակա սուբյեկտների բնույթը,

– առկա՞ է արդյոք վերադասության և ենթակայության հարաբերություն իրավահարաբերության կողմերի միջև, որը բնորոշ է վարչական իրավունքի ոլորտին:

Ըստ այդմ, Դատարանն արձանագրում է, որ վեճի լուծման համար ըստ էության կիրառելի է ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված Կարգը, որն իր բնույթով պարունակում է հանրային իրավունքի նորմեր, քանի որ դրանց կիրառման հասցեատերը հանրային իշխանություն իրականացնող սուբյեկտն է՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, նորմերն ունեն հանրային շահի պաշտպանությանը և կրթական քաղաքականության իրականացմանը միտված նպատակ, և դրանք ստեղծում են իրավական հետևանքներ ոչ թե իրավահավասար սուբյեկտների, այլ հանրային կառավարման համակարգում վերադասության հիմքով գործող սուբյեկտների միջև: Այսինքն՝ պետությունը, հանդես գալով որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, մրցույթի արդյունքների վերաբերյալ որոշում է ընդունում միակողմ կարգով՝ առանց իրավահավասար սուբյեկտների միջև բնորոշ փոխադարձ համաձայնեցման կամ բանակցային ընթացակարգի:

Դատարանի գնահատմամբ քննարկվող հարաբերություններում առկա է նաև վերադասության և ենթակայության հարց, քանի որ պետական մարմինը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, միակողմ կարգով որոշում է ընդունում այն մասին, թե ո՞ր

կազմակերպության հետ կկնքվի պայմանագիր և ու՞մ չի հատկացվի դրամաշնորհ: Այս գործընթացում մրցույթի մասնակից կազմակերպությունները գտնվում են հանրային իրավասու մարմնի իրավազորության ներքո, և նրանց իրավունքների ծագումը, իրականացման հնարավորությունը կամ սահմանափակումը պայմանավորված է պետության՝ իր հանրային իշխանական լիազորություններով միակողմ որոշում կայացնելու կարողությամբ:

Նման պայմաններում Դատարանը հանգում է եզրակացության, որ վեճի հիմքում ընկած իրավահարաբերությունները կարգավորվում են հանրային իրավունքի նորմերով, հետևաբար ունեն հանրային-իրավական բնույթ և ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանում:

Հիմք ընդունելով վերոգրյալը և հաշվի առնելով այն, որ գործն ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը, Դատարանը կարծում է, որ հարկավոր է գործն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարան՝ ենթակայության հարցի որոշման համար»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը</u>.

8. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/9950/05/25 գործն ըստ Լուսինե Գրիգորյանի հայցի ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 25-ի հանձնաժողովի որոշումը՝ «Անգլերեն 9» առարկայի դասագիրքը «Մարի հրատարակչություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից անցողիկ շեմը հաղթահարած ճանաչելու և գործածության երաշխավորման ներկայացնելու մասին, անվավեր ճանաչելու, անցողիկ շեմը «Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Անգլերեն 9» առարկայի դասագիրքը հաղթահարած ճանաչելու՝ ներկայացնելով գործածության երաշխավորման, որպես հետևանք՝ ՀՀ կրթության,*

[2] Տե՛ս դատական գործը, հատոր 2-րդ, թերթեր 3-6:

գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 25-ի հանձնաժողովի «Զանգակ-97» ՍՊ ընկերության հետ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ պայմանագիր չկնքելու և գումար չհատկացնելու մասին որոշումը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ «Մարի հրատարաչկություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ 9-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհների տրամադրման համար նվիրաբերության պայմանագրեր կնքելու մասին որոշումը (հրամանը, հաստատումը), «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ «Մարի հրատարակչություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ 9-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհների տրամադրման համար կնքված նվիրաբերության պայմանագրերն անվավեր ճանաչելու, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատմանը ներկայացնելու «Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Անգլերեն 9» առարկայի դասագրքի ստեղծման դրամաշնորհի տրամադրման նվիրաբերության պայմանագիրը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի մայիսի 22-ին ԿԳՄՍ նախարարություն Լուսինե Գեորգիի Գրիգորյանի կողմից ներկայացված բողոքի քննության արդյունքում կայացված «Զանգակ-97» ՍՊԸ-ի «Անգլերեն 9» դասարանների առարկաների դասագրքերի համար կրկնակի փորձաքննություն չիրականացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը «Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի ստեղծման դրամաշնորհի տրամադրման նվիրաբերության պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու և «Զանգակ-97» ՍՊԸ-ին գումար հատկացնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

9. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի

բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 126-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե գործը ենթակա չէ քննության քաղաքացիական դատավարության կարգով»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի «ը» կետի համաձայն՝ *«Բյուջեների կատարման կարգը սահմանում է կառավարությունը՝ սույն օրենքի հիման վրա: Բյուջեների կատարման կարգով սահմանվում են բյուջեների կատարման գործընթացի այլ դրույթներ»:*

Նշված դրույթի հիման վրա՝ ՀՀ Կառավարության կողմից 2003 թվականի դեկտեմբերի 24-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 1937-Ն որոշումը, որով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 1-ին կետի համաձայն՝ *«Սույն կարգով*

կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի (այսուհետ՝ բյուջե) միջոցների հաշվին իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններին (այսուհետ՝ կազմակերպություն) սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման գործընթացի հետ կապված հիմնական հարաբերությունները»:

Կարգի 2-րդ կետի համաձայն՝ *«Կազմակերպությանը սուբսիդիա կամ դրամաշնորհ տրամադրվում է սույն կարգի համաձայն կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա»:*

Նույն կարգի 4-րդ կետի համաձայն՝ *«Սույն կարգի իմաստով դրամաշնորհը տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով բյուջեից կազմակերպությանն իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացումն է»:*

Նույն կարգի 9-րդ կետի համաձայն՝ *«Կազմակերպությունը, որին հատկացվում է դրամաշնորհ, որոշվում է սույն կարգի համաձայն կազմակերպվող և անցկացվող մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) արդյունքներով»:*

Նույն կարգի 10-րդ կետի համաձայն՝ *«Դրամաշնորհի չափը սահմանվում է Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված ծրագրի հիման վրա: Դրամաշնորհի հատկացման նպատակով՝ տվյալ պետական մարմնի ղեկավարը (այսուհետ՝ նաև ղեկավար) կազմավորում է մրցույթի հանձնաժողով (այսուհետ՝ հանձնաժողով): (...)»:*

Կարգի 31-րդ կետի համաձայն՝ *«Մրցույթի արդյունքներն ամփոփվում են հանձնաժողովի ամփոփիչ նիստում հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկների հիման վրա: Հանձնաժողովն ընդունում է որոշում այն կազմակերպության մասին, որի հետ կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր, և այն կազմակերպության (կազմակերպությունների) մասին, որի (որոնց) հետ չի կարող կնքվել նման պայմանագիր: Մրցույթի արդյունքների ամփոփման նիստին հաջորդող*

աշխատանքային օրը նիստի արձանագրության, սույն կարգի 28.1-ին կետով նախատեսված հայտարարությունների և այն կազմակերպության ներկայացրած հայտի պատճենները, որի հետ կարող է կնքվել պայմանագիր, հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում: (…)»:

Նշված կարգի 33-րդ կետի համաձայն՝ *«Հանձնաժողովի որոշման ընդունման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի նախագահը սույն կարգի 31-րդ կետում նշված հանձնաժողովի որոշումը ներկայացնում է պետական մարմնի ղեկավարին՝ հաստատման»:*

Հիշյալ կարգի 34-րդ կետի համաձայն՝ *«Պետական մարմնի ղեկավարը սույն կարգի 33-րդ կետում նշված որոշումն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում կամ մերժում է այն»:*

Կարգի 35-րդ կետի համաձայն՝ *«Սույն կարգի 34-րդ կետի համաձայն՝ ղեկավարի կողմից հանձնաժողովի որոշումը հաստատվելու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում ղեկավարը պայմանագրի նախագիծը տրամադրում է այն կազմակերպությանը (կազմակերպություններին), որի հետ պետք է կնքվի պայմանագիր: Կազմակերպությունը պայմանագրի նախագիծն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ղեկավարին է ներկայացնում իր կողմից հաստատված պայմանագրի երկու օրինակը, որը կազմակերպության կողմից հաստատված պայմանագրի օրինակները ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է դրանք և մեկ օրինակը նույն օրը վերադարձնում պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությանը: Եթե կազմակերպությունը սույն կետով սահմանված ժամկետում չի հաստատում և ղեկավարին ներկայացնում պայմանագիրը, ապա նա զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից»:*

10. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանը մանրամասն անդրադարձ է կատարել *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության, երրորդ անձ «ՄաքԴոնալդս Քորփորեյշն» ընկերություն* վարչական գործով կայացված որոշման շրջանակներում՝ արձանագրելով հետևյալը. *«(…) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից*

տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (…) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (…)»[3]:

11. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն

---

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության, երրորդ անձ <<ՄաքԴոնալդս Քորփորեյշն>> ընկերություն*՝ վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի թիվ ՎԴ/0830/05/14 որոշումը:

իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Բացի այդ, իրավահարաբերությունը որպես հանրային որակելու համար անհրաժեշտ է, առաջին հերթին, բացահայտել իրավահարաբերության տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը:

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման գործընթացի հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական նորմերից հետևում է, որ դրամաշնորհը տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով պետական բյուջեից կազմակերպությանն իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ, քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա, տրամադրվող դրամական հատկացումն է: Այն կազմակերպությունը, որին հատկացվելու է դրամաշնորհ, որոշվում է ՀՀ Կառավարության կողմից հաստատված կարգի համաձայն կազմակերպվող և անցկացվող մրցույթի արդյունքներով: Դրամաշնորհի չափը նույնպես սահմանվում է ՀՀ Կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա բյուջեի կատարումն ապահովող միջոցառումները հաստատելու մասին որոշմամբ՝ ՀՀ Կառավարության կողմից հաստատված ծրագրի հիման վրա:

Դրամաշնորհի հատկացման նպատակով մրցույթն անցկացնում է պետական մարմնի ղեկավարի կողմից կազմավորված մրցույթի հանձնաժողովը: Վերջինս կազմակերպում և անցկացնում է մրցույթը, այնուհետև ամփոփելով դրա արդյունքները՝ ընդունում է որոշում՝ այն կազմակերպության մասին, որի հետ կարող է կնքվել դրամաշնորհի տրամադրման՝ նվիրաբերության պայմանագիր, և այն կազմակերպության (կազմակերպությունների) մասին, որի (որոնց) հետ չի կարող կնքվել նման պայմանագիր: Հանձնաժողովի որոշման ընդունման օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի նախագահը նշված որոշումը ներկայացնում է պետական մարմնի ղեկավարին՝ հաստատման: Վերջինս նշված որոշումը ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատում

կամ մերժում է այն: Այնուհետև, ղեկավարի կողմից հանձնաժողովի որոշումը հաստատվելու օրվան հաջորդող 15 աշխատանքային օրվա ընթացքում ղեկավարը պայմանագրի նախագիծը տրամադրում է այն կազմակերպությանը (կազմակերպություններին), որի հետ պետք է կնքվի պայմանագիր:

Վերոգրյալից հետևում է, որ չնայած դրամաշնորհը տրամադրվում է քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա, սակայն նախքան համապատասխան պայմանագիրը կնքելը, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է դրամաշնորհի տրամադրման հատուկ ընթացակարգ, մասնավորապես՝ դրամաշնորհի տրամադրման նպատակով անցկացվող մրցույթի ընթացակարգը, ինչպես նաև դրամաշնորհի չափը կարգավորվում են ՀՀ Կառավարության կողմից ընդունված որոշումներով, իսկ մրցույթի արդյունքներն ի վերջո ամփոփվում են համապատասխան պետական մարմնի ղեկավարի կողմից այդ արդյունքները հաստատելու կամ մերժելու վերաբերյալ կայացված որոշմամբ:

Նշված ընթացակարգի նախատեսումը, ըստ էության, պայմանավորված է նրանով, որ դրամաշնորհի տրամադրումը տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով պետական բյուջեից անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացում է, այն տրամադրվում է պետական բյուջեի միջոցների հաշվին, այդ իսկ պատճառով դրա տրամադրման համար օրենսդրությամբ նախատեսված է հատուկ ընթացակարգ: Այսինքն՝ դրամաշնորհի տրամադրման գործընթացն ուղղված է հանրային՝ տվյալ դեպքում կրթության շահի գործնականում իրացմանը, ուստի նշված գործընթացում համապատասխան պետական մարմինը և դրամաշնորհ ստացող կազմակերպությունը չեն գտնվում հավասար դիրքերում:

12. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Լուսինե Գրիգորյանը 2025 թվականի հունիսի 25-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 25-ի հանձնաժողովի որոշումը՝ «Անգլերեն 9» առարկայի դասագիրքը «Մարի հրատարակչություն» ՍՊԸ-ի և

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից անցողիկ շեմը հաղթահարած ճանաչելու և գործածության երաշխավորման ներկայացնելու մասին, անվավեր ճանաչելու, անցողիկ շեմը «Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Անգլերեն 9» առարկայի դասագիրքը հաղթահարած ճանաչելու՝ ներկայացնելով գործածության երաշխավորման, որպես հետևանք՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 25-ի հանձնաժողովի «Զանգակ-97» ՍՊ ընկերության հետ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ պայմանագիր չկնքելու և գումար չհատկացնելու մասին որոշումը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ «Մարի հրատարաչկություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ 9-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհների տրամադրման համար նվիրաբերության պայմանագրեր կնքելու մասին որոշումը (հրամանը, հաստատումը), «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ «Մարի հրատարակչություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ 9-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհների տրամադրման համար կնքված նվիրաբերության պայմանագրերն անվավեր ճանաչելու, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատմանը ներկայացնելու «Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Անգլերեն 9» առարկայի դասագրքի ստեղծման դրամաշնորհի տրամադրման նվիրաբերության պայմանագիրը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի մայիսի 22-ին ԿԳՄՍ նախարարություն Լուսինե Գեորգիի Գրիգորյանի կողմից ներկայացված բողոքի քննության արդյունքում կայացված «Զանգակ-97» ՍՊԸ-ի «Անգլերեն 9» դասարանների առարկաների դասագրքերի համար կրկնակի փորձաքննություն չիրականացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը «Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի ստեղծման դրամաշնորհի

տրամադրման նվիրաբերության պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու և «Զանգակ-97» ՍՊԸ-ին գումար հատկացնելու պահանջների մասին[4],

- հայցադիմումը ՀՀ վարչական դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 3-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ սույն դեպքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը հանդես է գալիս ոչ թե որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված անձ, ով իրացնում է հանրային իրավունքի նորմերով իրեն վերապահված լիազորություններն իր գործադիր-կարգադրիչ գործունեության ընթացքում, այլ որպես քաղաքացիական իրավահարաբերության մասնակից՝ ապագայում կնքվելիք քաղաքացիաիրավական պայմանագրի կողմ՝ Հայաստանի Հանրապետության անունից: Սույն դեպքում ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից վարչարարություն չի իրականացվել, այլ՝ սույն վեճից ծագող հարաբերությունները կրում են մասնավոր՝ պայմանագրային բնույթ, և, ինչպես նշվեց նախորդիվ, դրամաշնորհի հատկացման նպատակով պայմանագրի կողմի ընտրությունն իրականացվում է մրցույթի միջոցով, իսկ հրապարակային մրցույթ կազմակերպելու հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են քաղաքացիական օրենսդրությամբ[5],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2025 թվականի հուլիսի 29-ի որոշմամբ գտել է, որ վեճի լուծման համար կիրառելի է ՀՀ Կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված Կարգը, որն իր բնույթով պարունակում է հանրային իրավունքի նորմեր, քանի որ դրանց կիրառման հասցեատերը հանրային իշխանություն իրականացնող սուբյեկտն է՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, նորմերն ունեն հանրային շահի պաշտպանությանը և կրթական քաղաքականության իրականացմանը միտված նպատակ, և դրանք ստեղծում են իրավական հետևանքներ ոչ թե իրավահավասար սուբյեկտների, այլ հանրային կառավարման համակարգում վերադասության հիմքով գործող սուբյեկտների միջև: Այսինքն՝

---

[4] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

պետությունը, հանդես գալով որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ, մրցույթի արդյունքների վերաբերյալ որոշում է ընդունում միակողմ կարգով՝ առանց իրավահավասար սուբյեկտների միջև բնորոշ փոխադարձ համաձայնեցման կամ բանակցային ընթացակարգի: Քննարկվող հարաբերություններում առկա է նաև վերադասության և ենթակայության հարց, քանի որ պետական մարմինը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, միակողմ կարգով որոշում է ընդունում այն մասին, թե որ կազմակերպության հետ կկնքվի պայմանագիր և ում չի հատկացվի դրամաշնորհ: Այս գործընթացում մրցույթի մասնակից կազմակերպությունները գտնվում են հանրային իրավասու մարմնի իրավազորության ներքո, և նրանց իրավունքների ծագումը, իրականացման հնարավորությունը կամ սահմանափակումը պայմանավորված է պետության՝ իր հանրային իշխանական լիազորություններով միակողմ որոշում կայացնելու կարողությամբ[6]:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պարզելու համար, թե Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման գործընթացի հետ կապված հարաբերություններն արդյոք հանրային, թե մասնավոր բնույթի են, անհրաժեշտ է գնահատման առարկա դարձնել այդ իրավահարաբերությունների տարրերը՝ օբյեկտը, սուբյեկտը և բովանդակությունը:

Մասնավորապես՝ դրամաշնորհների հատկացման գործընթացքում՝

- տվյալ իրավահարաբերության սուբյեկտը՝ դրամաշնորհը ֆինանսավորողը, պետական մարմին է, ի դեմս՝ կրթության պետական կառավարման լիազոր մարմնի՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, որը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է,

- տվյալ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի՝ ՀՀ կրթության, գիտության,

---

[6] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

մշակույթի և սպորտի նախարարության կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, այն է՝ կրթության ոլորտի խթանման նպատակով պետական բյուջեից անհատույց և անվերադարձ փոխանցվող դրամական հատուցման գործընթացի կազմակերպումը, այսինքն՝ այն կապված է կրթության ոլորտում պետական ֆինանսավորման, հանրային միջոցների օգտագործման հետ,

- տվյալ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), քանի որ դրամաշնորհի հատկացման նպատակը հանրային շահի սպասարկումն է, այն տրվում է հանրային կարևորություն ունեցող խնդիրների լուծման համար՝ կրթության, գիտության և նմանատիպ այլ ոլորտներում: Հետևաբար՝ դրամաշնորհի հատկացման շուրջ ծագող իրավահարաբերությունը վերաբերում է կրթության ոլորտի զարգացման, կրթության՝ որպես հանրային շահի սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը:

Վերոգրյալից հետևում է, որ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրավաբանական անձանց դրամաշնորհների հատկացման գործընթացի հետ կապված հարաբերությունները կրում են հանրային բնույթ, հետևաբար սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

14. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/9950/05/25 գործն ըստ Լուսինե Գրիգորյանի հայցի ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 25-ի հանձնաժողովի որոշումը՝ «Անգլերեն 9» առարկայի դասագիրքը «Մարի հրատարակչություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից անցողիկ շեմը հաղթահարած ճանաչելու և գործածության երաշխավորման ներկայացնելու մասին, անվավեր ճանաչելու, անցողիկ շեմը

«Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Անգլերեն 9» առարկայի դասագիրքը հաղթահարած ճանաչելու՝ ներկայացնելով գործածության երաշխավորման, որպես հետևանք՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 25-ի հանձնաժողովի «Զանգակ-97» ՍՊ ընկերության հետ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ պայմանագիր չկնքելու և գումար չհատկացնելու մասին որոշումը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ «Մարի հրատարաչկություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ 9-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհների տրամադրման համար նվիրաբերության պայմանագրեր կնքելու մասին որոշումը (հրամանը, հաստատումը), «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ «Մարի հրատարակչություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ 9-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհների տրամադրման համար կնքված նվիրաբերության պայմանագրերն անվավեր ճանաչելու, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հաստատմանը ներկայացնելու «Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Անգլերեն 9» առարկայի դասագրքի ստեղծման դրամաշնորհի տրամադրման նվիրաբերության պայմանագիրը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի մայիսի 22-ին ԿԳՄՍ նախարարություն Լուսինե Գեորգիի Գրիգորյանի կողմից ներկայացված բողոքի քննության արդյունքում կայացված «Զանգակ-97» ՍՊԸ-ի «Անգլերեն 9» դասարանների առարկաների դասագրքերի համար կրկնակի փորձաքննություն չիրականացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը «Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի ստեղծման դրամաշնորհի տրամադրման նվիրաբերության պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու և «Զանգակ-97» ՍՊԸ-ին գումար հատկացնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

Ուստի, Լուսինե Գրիգորյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/9950/05/25 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ՎԴ/9950/05/25 գործն ըստ Լուսինե Գրիգորյանի հայցի ընդդեմ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 25-ի հանձնաժողովի որոշումը՝ «Անգլերեն 9» առարկայի դասագիրքը «Մարի հրատարակչություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի կողմից անցողիկ շեմը հաղթահարած ճանաչելու և գործածության երաշխավորման ներկայացնելու մասին, անվավեր ճանաչելու, անցողիկ շեմը «Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Անգլերեն 9» առարկայի դասագիրքը հաղթահարած ճանաչելու՝ ներկայացնելով գործածության երաշխավորման, որպես հետևանք՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի ապրիլի 25-ի հանձնաժողովի «Զանգակ-97» ՍՊ ընկերության հետ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակացությամբ պայմանագիր չկնքելու և գումար չհատկացնելու մասին որոշումը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ «Մարի հրատարաչկություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ 9-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհների տրամադրման համար նվիրաբերության պայմանագրեր կնքելու մասին որոշումը (հրամանը, հաստատումը), «Անգլերեն 9» առարկայի դասագրքի կապակցությամբ «Մարի հրատարակչություն» ՍՊԸ-ի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի հետ 9-րդ դասարանի հանրակրթական առարկաների դասագրքերի ստեղծման դրամաշնորհների տրամադրման համար կնքված նվիրաբերության պայմանագրերն անվավեր ճանաչելու, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

հաստատմանը ներկայացնելու «Զանգակ-97» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Անգլերեն 9» առարկայի դասագրքի ստեղծման դրամաշնորհի տրամադրման նվիրաբերության պայմանագիրը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության՝ 2025 թվականի մայիսի 22-ին ԿԳՄՍ նախարարություն Լուսինե Գեորգիի Գրիգորյանի կողմից ներկայացված բողոքի քննության արդյունքում կայացված «Զանգակ-97» ՍՊԸ-ի «Անգլերեն 9» դասարանների առարկաների դասագրքերի համար կրկնակի փորձաքննություն չիրականացնելու մասին որոշումն անվավեր ճանաչելու և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը «Զանգակ-97» ՍՊԸ-ի հետ «Անգլերեն 9» առարկայի դասագրքի ստեղծման դրամաշնորհի տրամադրման նվիրաբերության պայմանագիր կնքելուն պարտավորեցնելու և «Զանգակ-97» ՍՊԸ-ին գումար հատկացնելու պահանջների մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ՔՐԻՍՏԻՆԵ ՄԿՈՅԱՆ